Հովհաննես ՉԱՔԱՐՅԱՆ, Ռուբեն ՀԱԿՈԲՅԱՆ

*ՇԻՐԱԿԻ ՇԹԱՔԱՐԱՅԻՆ ԾԱԾԿԵՐԸ**

Շթաքարերը ճարտարապետության մեջ հիմնականում ծածկերի զարդարման հնարք են: Կազմված են երկրաչափորեն կանոնավորապես հերթագայվող եռաչափ նիստավոր ելուստներից ու փոսորակներից, որոնք առաջացնում են լուսաստվերային խաղ՝ հիշեցնելով բնական շթաքարերի ծալքերն ու լեզվակները (Նկ. 1.): Շթաքար անունը տրված է հետևաբար՝ որպես փոխաբերություն (ֆր. stalactites, ռուս. сталактиты): Հոմանիշներն են՝ անգլ. honeycombs «մեղրաբջիջներ», ռուս. ячеистый/сотовый свод «բջջային կամար», արաբ. muqarnas «ծեփազարդ»:

Ճարտարապետական զարդարական այս հնարքը քրիստոնյա աշխարհում կիրառել են հայերը, մահմեդական աշխարհում՝ սելջուկները, պարսիկները, արաբները:

Թերևս մահմեդական ճարտարապետության մեջ հայկականի համեմատ կիրառության ավելի մեծ ծավալն ու աշխարհագրական ընդգրկումն են պատճառը, որ մասնագիտական գրականության մեջ շթաքարերը համարվում են մահմեդական ճարտարապետությանը բնորոշ երևույթ: Ինչ վերաբերում է ծագումնաբանությանը, ապա այս հնարքի ակունքները առավելապես փնտրվում են իրանական մշակույթում, կամ հաշվի առնելով, որ շթաքարերի՝ մեզ հասած նմուշների հնագույն օրինակները մասամբ համընկնում են Փոքր Ասիայի պատմության սելջուկյան շրջանին՝ նաև սելջուկյան մշակույթում: Նման մոտեցումները մակերեսային են:

Շթաքարերի տարածման քարտեզն, ըստ բնակավայրերի, ունի այս տեսքը: (Նկ.2.)

Նկ. 1. Հառիճավանքի գավիթի ծածկը



Նկ. 2. Շթաքարերի տարածվածությունը Մերձավոր Արևելքում

Ինչպես տեսնում ենք, ամենամեծ խտությունը Հայաստանում է, որը նաև կենտրոնական դիրք ունի շթաքարերի կիրառման տարածքում:

Այս փաստը բացահայտում է Հայաստանի առանցքային դերը շթաքարերի գոյացման ընթացքում:

---

* *Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովում:*

3. Շթաքարերի տարածվածությունը ՀՀ-ում և հարակից շրջաններում

Եթե վերցնենք միայն Հայաստանը, ապա ամենամեծ խտությունը տեսնում ենք Կոտայքում և Վայոց ձորում: (Նկ. 3.)

Շիրակում խտությունը թեև փոքր-ինչ պակաս է, սակայն Շիրակը, ինչպես կտեսնենք, առանցքային դեր ունի այս հնարքի կայացման, զարգացման և տարածման գործում:

Շիրակում շթաքարեր պարունակող միջնադարյան կառույցներն են Հառիճավանքը, Հոռոմոսի վանքը, Բագնայրի վանքը, Անիի Առաքելոց եկեղեցին, Մանուչեի մզկիթը, Պահլավունյաց իշխանական տունը (Պարոնի պալատը), Տիգրան Հոնենցի եկեղեցին և այլն:

Ըստ Հովսեփ Օրբելու՝ շթաքարային ծածկի ամենահին, բայց և արդեն լիարժեք կայացած նմուշը Անիի Առաքելոց եկեղեցու գավիթի ծածկն է[1] (Նկ. 4.): Նա այդ կառույցը թվագրում է ԺԱ դարի երկրորդ կես: Դրան ժամանակագրորեն հաջորդում է Մանուչեի մզկիթը, որտեղ շթաքարային ամբողջական ծածկ չկա, սակայն կան շթաքարային զարդով տրոմպային անցումներ և շթաքարի այլ կիրառություններ (Նկ. 5.): Այդ շինությունը թեև պատվիրել է մահմեդական սելջուկ իշխան Մանուչեն, սակայն ակնհայտ է, որ կառուցել են հայ վարպետները, հավանական է՝ հենց նույն վարպետները, որոնք կառուցել են Առաքելոց եկեղեցու գավիթը: Դա է հուշում երկու կառույցների թե՛ զարդարական-ոճական, թե՛ կառուցողական-տեխնիկական ակնհայտ ընդհանրությունը:

Ն. Մառը սրա մասին գրել է. «*Ամենք կառույցը մզկիթ են համարում. սակայն այն ժամանակ, երբ կառուցապատվում էր Անիի հին մասը, այդ քաղաքում մահմեդականներ չեն եղել. շենքի կողին բարձրացող մինարեթը կցակառուցվել է*

[1] *Орбели И. Избранные труды. Т. 1, М., 1968, С. 49.*

հետագայում. հնարավոր է միայն մեկ բան՝ հենց այն, որ Անիի մահմեդական կառավարիչները մզկիթի են վերափոխել հիանալի շենքը»[2]:



Նկ. 4. Անիի Առաքելոց եկեղեցու գավիթի ծածկը



Նկ. 5. Մանուչեի մզկիթի ծածկը:

Հայտնի է, որ այդ շենքը կառուցել է Աշոտ Բագրատունի արքան 962 թվականին: Իսկ մասամբ վերակառուցել է Շեդդադյան ամիրա Մանուչեն 1070-ականներին[3]: Իսկ եթե դրան հավելենք, որ «մզկիթի» շինարվեստը չի տարբերվում հայկական ավանդական շինարվեստից, և շթաքարերն էլ այստեղ արդեն իսկ խիստ զարգացած, ճոխ, դասական տեսք ունեն, ապա պարզ կդառնա, որ «մզկիթի» շթաքարը մինչ այս արդեն իսկ զարգացման երկար ուղի պիտի անցած լինի:

Հ. Օրբելին նկատում է, որ Անիի Առաքելոցի շթաքարային ծածկի ստեղծման համար անհրաժեշտ պիտի լիներ զարգացման առնվազն 150-200 տարվա նախապատմություն: Պետք է ենթադրել, որ այդ պատմական անցումը կատարվել է հայկական ժողովրդական տներում (իշխանական տներ և այլն), որոնք չեն պահպանվել: Կարևորն այն է, որ Անիի Առաքելոցում աշխարհիկ շինություններին բնորոշ այդ ծածկը առաջին անգամ կիրառվեց որպես ծիսական կառույցի բաղադրիչ:

Շթաքարային ծածկի ծագումը ոմանք կապում են բջջային տրոմպի (կամ բջջային առագաստի) հետ (Օ. Շուազի[4] և այլն[5]) (Նկ. 6): Սակայն դժվար չէ համոզվել, որ թե՛ տրոմպը, թե՛ շթաքարային ծածկը առաջացել են հազարաշեն գմբեթի հորինվածքը քարով կամ աղյուսով վերարտադրելու և գեղարվեստորեն մշակելու արդյունքում (Նկ. 7.ա, բ):

Հայաստանում տրոմպային փոխանցումով գմբեթային համակարգը, ինչպես հայտնի է, գոյություն ունի դեռևս 5-րդ դարից (վաղագույն օրինակներ են Ողջաբերդի, Ջովունիի Պողոս-Պետրոս եկեղեցիները)[6]: Կարծիքներ կան նաև, որ հայկական հովհարաձև տրոմպի ելակետը փայտե հազարաշեն գմբեթի կառուցվածքն է: Եվ իրոք, հազարաշենի անկյունային սալերը հատկապես քարով լուծվելիս արդեն իսկ ներկայանում են որպես պարզագույն տրոմպ (Նկ. 8):

Ինչ վերաբերում է շթաքարային ծածկին, ապա փայտե (գերաններով, չորսուներով կամ ոստերով հավաքված) հազարաշեն ծածկն արդեն ինքնին թողնում է շթաքարի տպավորություն (Նկ. 9):

---

[2] *Историко-археологическій набросокъ Проф. Н. Марра. 1898 г.*

[3] *Օրբելի Հ., նշվ. աշխ., էջ 47-48:*

[4] *Шуази О. История архитектуры. Т. 2, М., 1931, С. 100.*

[5] *Օրբելի Հ., նշվ. աշխ., էջ 63: Яндекс.Словари›Словарь изобразительного искусства, 2004-2009.*

[6] *Շախկյան Գ., Հայ – արաբական ճարտարապետական առնչակցություններ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Եր., 2004, էջ 168-169:*



Նկ.6. Բջջային տրոմպ՝ ըստ Օ. Շուազիի



Նկ.7. ա. Շթաքարային տրոմպ. Հայրավանք

Նկ.7. բ. Փայտե հազարաշենի հատված. Հոռոմոս



Նկ.8. Հոիփսիմեի տաճարի տրոմպը



Նկ.9. Փայտե հազարաշեն. Բասեն:

Դա առավել ուժեղանում է հազարաշենի բաղադրիչ տարրերի անցումները զարդարական մշակման ենթարկելու շնորհիվ: Դրանում կարող ենք համոզվել քարե անզարդ և զարդարուն հազարաշեն ծածկերը համեմատելիս (օրինակ՝ Տավուշի Առաքելոց և Գանձասարի վանքերի գավիթների) (Նկ. 10): Քարե զարդարուն շթաքարային և փայտե հազարաշեն ծածկերի համեմատությունը բացահայտում է թե՛ կառուցվածքային տարրերի ուրվագծերի (գերաններ և դրանց քարե փոխարինիչներ) (Նկ. 13), թե՛ անցումային տարրերի (փայտե ձողեր և եռաթերթիկ կամ հնգաթերթիկ զարդեր) (Նկ. 7.ա. բ.) ծագումնաբանական ընդհանրությունը:

Շթաքարային ծածկի հայկական ծագման վարկածի հիմնավորման տարրերը կարելի է գտնել Ս. Վարդանյանի «Հազարաշենը և նրա նշանակությունը հայկական ճարտարապետության մեջ» հոդվածում[7]:

Այդտեղ հազարաշեն կառուցվածք են համարվում նաև Գեղարդավանքի, Հառիճավանքի, Գանձասարի վանքի և այլ գավիթների շթաքարային ծածկերը, որոնք քարե նյութով կրկնել են փայտե հազարաշենի հազարամյակների ավանդույթը:

---

[7] *Վարդանյան Ս., Հազարաշենը և նրա նշանակությունը հայկական ճարտարապետության մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1, Եր., 1978, էջ 78-88:*



Նկ.10.ա. Տավուշի Առաքելոց վանքի գավիթի ծածկը



Նկ.10.բ. Գանձասարի վանքի գավիթի ծածկը

Խնդիրն այն է, որ փայտե հազարաշենը հաճախ ոչ պակաս ճոխ է զարդարվել, քան քարե հազարաշենը, և Հայաստանում օգտագործվել է ոչ միայն ժողովրդական տներում (գլխատներում), իշխանական պալատներում, քարավանատներում, դամբարաններում, այլև եկեղեցիներում:[8]

Փայտե հազարաշենից շթաքարային ծածկի առաջացման վարկածի հիմնավորումը տվել է նաև Վ. Հարությունյանը: Նա համեմատական վերլուծությամբ ներկայացրել է միջնադարյան քաղաքացիական ճարտարապետության ժողովրդական ակունքները, ծածկաձևերի (ներառյալ՝ շթաքարայինի) ժառանգական կապը ժողովրդական գլխատան հազարաշեն (սողոմաքաշ) ծածկի հետ[9]:

Ա. Սահինյանը շթաքարային երդիկավոր քարե գմբեթարդը (թաղը) իրավացիորեն համարում է հայկական ճարտարապետական-կառուցողական արվեստի մեծ նվաճում[10]:

Ս. Մնացականյանը նույնպես գտնում է, որ շթաքարային քարաշեն ծածկը հայկական ճարտարապետության միանգամայն ինքնուրույն նվաճումն է[11]: Նա նշում է, որ հայկական շթաքարե հորինվածքները տեղ են գտել սելջուկյան ճարտարապետության մեջ՝ կազմելով մեդրեսեների և մզկիթների շքամուտքերի ձևավորման հիմնական տարրերից մեկը[12]:

Այսպիսով, շթաքարային ամբողջական ծածկը փաստորեն ինքնին հազարաշեն է՝ կատարված քարով (հայկական ճարտարապետություն) կամ աղյուսով ու ծեփով (մուսուլմանական ճարտարապետություն): Ընդ որում՝ քարե շթաքարային ծածկը ածանցյալ է փայտե հազարաշենից (դրա զարդարական ընդօրինակումն է), իսկ ծեփածո շթաքարային զարդը (մուքարնաս) իր հերթին ածանցյալ է քարե ծածկից (դրա մակերեսային ընդօրինակումն է) (Նկ. 11):

Փայտե հազարաշենում գերաններն ու դրանց միջև անցումները լցնող ձողերը կառուցվածքային գործառական արժեք ունեն: Քարե անզարդ շթաքարային ծածկում գերաններին փոխարինող քարասալերը մասամբ պահպանում են այդ արժեքը: Իսկ քարե զարդարուն շթաքարային ծածկում գերաններն և անցումային ձողերի ուրվագծերը արդեն զուրկ են կառուցվածքային գործառույթից և ունեն միայն զարդարական արժեք (Նկ. 13—15):

---

[8] *Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 78-88:*

[9] *Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 253-281:*

[10] *Սահինյան Ա., Գառնի – Գեղարդ, Եր., 1968, էջ 19:*

[11] *Մնացականյան Ս., նույն տեղում:*

[12] *Նույնը:*



Նկ.11. Մուտքի կիսաքանդ մուքարնաս. Սամարղանդ



Նկ.12. Սամառայի «Իմամի դուռ» դամբարանը

Հայտնի է, որ հազարաշենը հայկական երևույթ է: Դա հայկական ավանդական գլխատան երդիկավոր ծածկի հորինվածքն է: Գլխատան հնագույն նկարագրությունը գտնում ենք Քսենոփոնի «Անաբասիս»-ում (մ.թ.ա. Ե դար)[13], իսկ բրածո հնագույն նմուշը հայտնաբերվել է Շիրակի տարածքում՝ Դրասխանակերտ հնավայրում, և վերաբերում է մ.թ.ա. Ե-Գ դարերին[14]:

Այս ամենը ցույց է տալիս, որ շթաքարային ծածկը ունի հայկական ծագում[15]: Իսկ հայկական ճարտարապետությունից մուսուլմանականին առաջին անցումը կատարվել է Շիրակում՝ Անիում:

Սակայն հազիվ թե Հայաստանում քարե շթաքարերով ճոխ նմուշներն առհասարակ շատ են եղել: Կար, ինչպես տեսանք, ավանդույթը, կային նախօրինակները, սակայն բացակայում էին տնտեսական ու քաղաքական պայմանները: Պատահական չէ, որ շթաքարային քարաշեն ծածկի առաջին օրինակը տեսնում ենք Անիում, այսինքն՝ այնտեղ, որտեղ արդեն կային իրենց այդպիսի ճոխություն թույլ տալու հնարավորություն ունեցողներ: Մյուս կողմից՝ մշակութային վերածնունդը արդեն թույլ էր տալիս շատ ավելի ճոխ զարդարել ոչ միայն աշխարհիկ, այլև պաշտամունքային շինությունները: Պատահական չէ նաև, որ շթաքարային զարդը անմիջապես փոխառեցին մահմեդականները, որոնք ավելի քան ունեին դրա նյութական հնարավորությունը:

Այնուհետև շթաքարը մասնատվելով ու ձևափոխվելով ստացել է նաև այլ կիրառություններ (մուտքի գմբեթարդ, որմնախորշի ծածկ, անկյունազարդ, տրոմպ, խոյակ, խարիսխ, լուսամուտի շրջանակ, ներքին կամ արտաքին քիվ, բարավորի կամար և այլն)՝ վերածվելով զուտ զարդի:

Շթաքարը եթե հայկական ճարտարապետության մեջ երբեմն պահպանում է իր սկզբնական՝ կառուցողական նշանակությունը, ապա որպես զուտ զարդարանք է ընկալվում մուսուլմանական ճարտարապետության մեջ: Դա է վկայում նրա արաբերեն անվանումը՝ մուքարնաս, որ նշանակում է «ծեփազարդ»:

---

[13] *Քսենոփոն, Անաբասիս, Եր., 1970, էջ 97:*

[14] *Մանրամասն տե՛ս Тер-Мартиросов Ф. Сведения Ксенофонта и дом, открытый на памятнике Драсханакерт. Международная научная конференция «Археология, этнология, фольклористика Кавказа», Тбилиси, 25-27 июня, 2009 года. Сборник кратких содержаний докладов. Издательство «Меридиани», Тбилиси, 2010, С. 268-270.*

[15] *Տե՛ս նաև G. Rivoira. Moslem architecture, its origin and development. London, 1918, p. 179.*

Դա վերաբերում է անգամ Ալհամբրայի գմբեթներին (17-րդ դ.), թեև դրանք մուսուլմանական ճարտարապետության մեջ ամենից ավելի են հիշեցնում հազարաշեն ծածկը (Նկ. 16):



Նկ.13. Փայտե հազարաշեն (գծապատկեր)



Նկ.14. Տավուշի Առաքելոց վանքի գավիթի ծածկը



Նկ.15. Գանձասարի վանքի գավիթի ծածկը

Նկ.16. Ալհամբրա (շթաքարային ծածկի գծապատկեր)

Նկատենք նաև, որ Սամառայում Իմամի դուռ կոչվող դամբարանը, որ համարվում է մահմեդական աշխարհում շթաքարեր պարունակող ամենահին կառույցը, թվագրվում է ընդամենը 1085 թվականով (Նկ. 12): Ի դեպ, այս դամբարանի գմբեթարդը արտաքուստ շթաքարային շրջված ծածկի տեսք ունի և, կարելի է ասել, փայտե հազարաշեն ծածկի պատճենն է: Իսկ Սամառայում չկան գլխատներ և հազարաշեն այնպիսի ծածկեր, որոնց կառուցվածքն ունի ոչ թե զարդարական, այլ գործառական նշանակություն: Հետևաբար արևելյան մշակույթում շթաքարը փոխառություն է հայկական մշակույթից:

Այժմ համառոտ նկարագրենք Շիրակի շթաքարային ծածկերը և շթաքարի այլ կիրառությունները:

Ամբողջական ծածկեր: Այդպիսիք կան Հռոմոսում (Նկ. 17-20), Բագնայրում (Նկ. 21-22), Հառիճում (Նկ. 1): Ընդ որում, Հռոմոսում, Բագնայրում եղել են մի քանիսը, որոնցից Հռոմոսում լրիվ կամ մասամբ պահպանվել են 4-ը, Բագնայրում՝ մեկի մնացորդները: Հռոմոսի այդ ծածկերից մեկը (Նկ. 19.ա. բ.), որ խաչվող

կամարների վրա է, ունի թվագրյալ շինարարական արձանագրություն՝ 1277 (ՉԻԶ), կառուցող վարպետն է Ֆրեր Կարնեցին:



Նկ.17. Հոռոմոս. շթաքարային ծածկի մնացորդներ



Նկ.18. Հոռոմոս. շթաքարային ծածկ

Նկ.19.ա. Հոռոմոս. շթաքարային ծածկ



Նկ.19.բ. Հոռոմոս. շթաքարային ծածկ խաչվող կամարների վրա



Նկ.20. Հոռոմոս. շթաքարային ծածկի մնացորդներ



Նկ.21. Բագնայր. շթաքարային ծածկի մնացորդներ

Ծածկի տրոմպային անցումներ: Այդպիսիք կան Մանուչեի մզկիթում (Նկ. 5), Հոռոմոսում (Նկ. 23), Բագնայրում (Նկ. 24):

Նկ.22. Բագնայրի ժամատան մնացորդները

Նկ.23. Հոռոմոս. շթաքարային զարդով տրոմպային անցում



Նկ.24. Բագնայր. շթաքարային զարդով տրոմպային անցումներ

Շթաքարի այլ կիրառություններ: Մուտքավերևի և խորշավերևի գմբեթարդներ են առկա Անիի Առաքելոցում (Նկ. 25), մուտքի բարավորի կամար՝ Հոռոմոսում (Նկ. 26), արտաքին քիվ՝ Մանուչեի մզկիթում (Նկ. 27), խոյակի անկյունազարդեր՝ Տիգրան Հոնենցի եկեղեցում (Նկ. 28), Անիի Առաքելոցում (Նկ. 29), ճակտոնի զարդեր՝ Պահլավունյաց իշխանական տանը (Նկ. 30)-և այլն:

Նկ.25. Անիի Առաքելոց եկեղեցու գավիթի շքամուտքը

Նկ.26. Հոռոմոսի 13-րդ դ. ժամատան շքամուտքը



Նկ.27. Մանուչեի մզկիթի մինարեթի քիվը

Նկ.28. Անի. Տիգրան Հոնենցի եկեղեցու գավիթի խոյակ

Նկ.29. Անիի Առաքելոց եկեղեցու գավիթի խոյակ

Նկ.30. Անի. հատված Պահլավունյաց իշխանական տան շքամուտքից

СТАЛАКТИТОВЫЕ СВОДЫ ШИРАКА

___ *Резюме* ___ ___ *О. Закарян, Р. Акопян* ___

В Шираке сталактитовые элементы имеют монастыри Арича, Оромоса и находящиеся в Ани церкви Аракелоц и Тиграна Оненца, мечеть Мануче, княжеский дом Пахлавуни (дворец Парона) и др.. Согласно Иосифу Орбели, древнейшим, но в то же время полностью сформировавшимся образцом сталактитового свода, является перекрытие гавита (паперти) церкви Аракелоц в Ани.

Известно, что азарашен — армянское явление. Это композиция традиционного армянского жилища глхатун с центральным фонарём. Древнейшее описание глхатуна находим в «Анабасисе» Ксенофона (5 в. до н. э.), а древнейший образец обнаружен в Ширакском регионе при раскопках Драсханакерта и относится к 5 — 3 вв. до н. э. Всё это показывает, что сталактитовый свод имеет армянское происхождение. А из армянской архитектуры в мусульманскую он перешёл опять-таки из Ширака и Ани.

Сталактитовый свод, расчленяясь и видоизменяясь, получил также и иные применения (покрытие ниши, угловое украшение, тромп, капитель, база, обрамление окна, внутренний или внешний карниз, притолока и др.), превратившись в чистый декор.

Տեղեկություններ հեղինակների մասին

Զաքարյան Հովհաննես Լևոնի – բ.գ.թ., դոցենտ, Հայկական պետական մանկավարժական համալսարան, «Տաթև» գիտակրթական համալիր, E-mail: hovzakaryan@yahoo.com

Հակոբյան (Թարումեան) Ռուբեն Խաչատուրի – ճարտարապետ, «Զանգակ» հրատարակչություն, տառաստեղծ-ձևավորող, E-mail: post@tarumian.am